

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 7

15 Յուլիս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՆՈՐ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ ԼԵՒՈՆԻ ԺԳ.Ի Գործաւորաց վիճակին վրայ: (Շար.) — Թարգմ. Գեղբ. Վ. Թերզիպաշեան:
2. ՊՈՐԼՈՍԻ ՈՎԻԴԵՍՅ ՆԱՍՈՆԻ Տխրականք. — Թարգմ. Յ. Վ. Մխիթեան:
3. ՍԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԿՐՕՆՔԸ:
4. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ (Շարայարեւի) . — Յ.Է. Վ. Անդեան:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ 7

15 Յուլիս 1894

ՆՈՐ ԾՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ԼԵԻՈՆԻ ԺԳ. Ի

Գործաշորաց վիճակին վրայ



(Շարայարութիւն) (*)

Այլ անտարակոյս է թէ առաջարկեալ խնդիրը լուծելու համար կը խնդրուին նաեւ մարդկան իշխանութեան տակ գրտնուող միջոցներ: Հարկ է զի ամենայն ոք որ յայնմ մասն ունի՝ ըստ կարի աշխատի եւ զործակցի: Եւ այս բանս, զաշխարհ կառավարող Նախախնամութեան հետ տեսակ մը նմանութիւն ունի. որովհետեւ ընդհանրապէս իրաց յաջող ելքը կախումն ունի անոնց պատճառներուն համընթաց գործողութենէն:

Արդ տեսնենք թէ ինչ դարման եւ օգնութիւն պէտք է ակնկալել պետութենէն: Հոս պետութիւն ըսելով չեմք իմանար այս կամ այն ժողովրդեան կառավարութիւնը, այլ զայն զոր կը պահանջէ ընդարդոյս ուղիղ բանակիանութիւն եւ Աստուածային

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տարի, Թիւ 6, էջ 132 :

խմաստութեան օրէնքն, զոր մեք ինքնին կառավարութեանց Քրիստոնէական կազմակերպութեան վրայ գրած Մեր Շրջաբերականին մէջ մեկնաբանեցինք: Ուստի նախ քան դամնեսին պէտք է որ տէրութեանց վարիչներն առ այս գործ փոյթ ի մէջ առնուն՝ օրինաց եւ կարգադրութեանց միջոցով: այսինքն է պետութեան կարգաւոր եւ բարւոք վարչութեամբ հասարակութիւնն եւ առանձնականները երջանկացնելով: Այս է քաղաքական խոհեմութեան պաշտօնն եւ վարիչներու պարտքը: Արդ ժողովրդոց երջանկութիւնը գլխաւորաբար կը ծաղի ի լաւ բարոյից, ի կարգաւորութենէ ընտանեաց, ի պահպանութենէ կրօնից եւ արդարութեան, հանրային բեռանց թէ չափաւորութենէն եւ թէ արդար բաշխումէն, արուեստից եւ վաճառականութեան զարգացումէն, մշակութեան ծաղկելէն, եւ այլ սոցին նման հնարքներէն, որք որչափ աւելի բարգաւաճին, այնչափ եւս առաւել բարեբաստիկ կեանք պիտի վարեն քաղաքացիք: Ուստի այս բաներուս զօրութեամբ կառավարութեանց պետերն՝ ինչպէս ուրիշ գասակարգերու, սոցնպէս եւ սինլքորին կրնայ օգնութիւն մատուցանել, եւ այս իւր իրաւամբ եւ առանց ինչ կասկածանաց անկարեւոր միջամտութեան, զի պետութեան պարտքն է հասարակաց իրաց ինամ տանիլ ըստ պաշտամանն: Եւ որչափ մեծագոյն է այս ընդհանուր տեսչութենէն յառաջ եւ կած բարիք, այնչափ նուազ պիտի ըլլայ գործաւորաց բարօրութեան համար ի կիր արկանելու միջոցներուն հարկը:

Բաց աստի, պէտք է խորհիլ բան մըն ալ որ մեր ինդրոյն աւելի խորերը կը թափանցէ: այսինքն թէ պետութիւնն այնպիսի ներդաշնակ միութիւն մըն է որ հաւասարապէս կ'ընդլուկէ բարձրագոյն եւ ստորին գասակարգերը: Այնու զի սինլքորներն ալ բնական իրաւամբ ճիշդ հարուստներուն պէս քաղաքացի են, ճշմարիտ եւ կենդանի անդամներ, յորոյ ընտանեաց միջոցաւ կը կազմուի բնկերական մարմինը. մանաւանդ որ ամեն քաղքի մէջ անոնք շատ աւելի ստուարագոյն թիւը կը կազմեն: Եւ որովհետեւ շատ հակասական բան է քաղաքացեաց մէկ մասը ինամիւ, միւսը զանց առնել, անոր համար կառավարութեան անհրաժեշտ պարտքն է գործաւորաց պահովութեան ու բարեկեցութեան պաշտպանութեանը հոգ տանիլ, առանց բռնաբարելու զարդարութիւն, որ կը պատուիրէ տալ իւրաքանչիւրում զիւրն: Ուստի խմաստութեամբ կ'ըլտէ Ս. Թովմաս. «Որպէս մասն եւ բոլորն գոգցես նոյն իմն եմ, սոյնպէս որ ինչ բո-

յորին է, գոգցես եւ մատին է» (1): Նմին իրի ժողովրդեան բար-
ւոք իննամատար իշխանաց բազմաթիւ ու ծանր պաշտօններուն
առաջինն է քաղաքացեաց իւրաքանչիւր դասակարգը հաւասար-
բապէս պաշտպանել, անեղծ պահելով այն արտադրութիւնը որ
դրամաբաշխական կ'անուանի:

Թէեւ ամեն քաղաքացիք առանց բացառութեան, հասա-
րակաց բարօրութեան որ եւ յետոյ բնականաբար յօդուտ ան-
հատից կը դառնայ, պէտք է աջակից ըլլան, այլ անհնար է որ
ամենքն ալ միեւնոյն բանը կարենան ընել: Որչափ փոխուին ու
փոփոխուին կառավարութեանց կերպերը, միշտ պիտի գտնուի
վիճակներու այն զանազանութիւնը ու անհաւասարութիւնը,
առանց որոյ մարդկային կենակցութիւնն ո՛չ կայ եւ ո՛չ կրնայ
մտածուիլ: Միշտ պիտի ըլլան հասարակաց պաշտօնեացք, օրէ-
նադիրք, դատաւորք ի հուսին՝ այնպիսի մարդիկ որք խաղա-
ղութեամբ կառավարեն ազգը, եւ զայն պաշտպանին ի պատե-
րազմի, եւ ասոնք հասարակաց բարւոյն մերձաւորագոյն եւ
ազգու պատճառներն ըլլալով, բնականաբար ժողովրդեան առա-
ջաւորներն պիտի ըլլան: Նոյն եղանակաւ եւ միեւնոյն պաշ-
տօններով հանրութեան բարւոյն չեն կրնար մասնակցիլ ար-
ուեստագէտք, այլ եւ այնպէս եւ նոքա հզօրեղապէս կ'ազդեն
իրենց ծառայութեամբք: Յիրաւի քաղաքական բարիքն այնպի-
սի պէտք է ըլլայ որ անոր ստացմամբ մարդիկ լաւագոյնք
յարգարուին, ուստի եւ այս բարիքն յառաքինութեան կայա-
ցած է: Սակայն եւ այնպէս ամենայն լաւ կարգաւորեալ տէ-
րութեան կը պատկանի նաեւ մատակարարութիւն մարմնաւոր
եւ արտաքին իրաց «Որոց վայելումն կարեւոր է ի գործ առա-
քինութեան» (2): Արդ այս բարիքները ի ձեռա բերելու համար
մեծապէս ազգու է եւ կարեւոր գործաւորաց աշխատութիւնը,
թէ՛ զարտ մշակեն թէ՛ գործանայներու մէջ զբաղին: Նա մա-
նաւանդ անոնց ազդեցութիւնն եւ զօրութիւնն այնչափ մեծ է
յայտմ մասին, որ ճշմարտապէս գործաւորաց աշխատութիւնէն
միայն ծնունդ կ'առնուն քաղաքաց փարթամութիւնք: Իրաւ-
ունք է ուրեմն որ կառավարութիւնը գործաւորին պաշտպան
կենաց, անանկ որ իւր յօդուտ հասարակաց յառաջ բերած բա-
նէն ինքն ալ մտա մ'առնու, որպէս զի զիւրաւ գտնէ իւր բնա-

(1) Բ. Բ. Խնդ. ԿԱ. յօդ. Ա. առ երկրորդն

(2) Ս. Թովմ. յադ. Էսրչ, էչն, Ա, Գ, ԺԵ.

կարանն պարէն եւ զգեստեղենն, որպէս զի յարանովի կարենաց կենաց բեռնն հեշտեալ հանդուրժել: Ուստի գործաւորաց վիճակը ինչ եւ է կերպով բարեօքելու միջոցներն պէտք է ձեռք առնուլ՝ որ այլոց ոչ թէ միայն չի վնասեր, այլ եւ մեծապէս օգտակար է, զի այնչափ կարեւոր բարիք յառաջ բերողներուն թշուառ չըլլալը բոլոր տէրութեան օգուան է:

Արդարութիւն չէ, ինչպէս ըսինք, քաղաքացւոյն եւ ընտանեաց ի պետութենէ բռնաբարութիւր. այլ պէտք է երկոցունց թողուլ ազատօրէն գործելու կարողութիւնը, որչափ հնար է առանց վնասելու հասարակաց բարեոյն եւ անխրտելու անհատից: Այսու հանդերձ կառավարիչներն պարտին պաշտպան կալ հասարակութեան եւ նորա մասերուն: Նախ հասարակութեան, որովհետեւ սորա պաշտպանութիւնը ի բնութենէ յանձնուած է գերագոյն իշխանութեան, այնպէս որ, հասարակաց փրկութիւնը ո՛չ թէ դերագոյն օրէնք միայն է, այլ կառավարութեան ամբողջ պատճառն է. յետոյ մասերուն, որովհետեւ փիլիսոփայութիւնն եւ Քրիստոնէական հաւատք միանգամայն կ'ուսուցանեն թէ կառավարութիւնն ի բնութենէ հաստատուալ է ո՛չ թէ կառավարողաց, այլ կառավարելոց յօգուտ: Եւ քանզի հրամայելու իշխանութիւնն յԱստուծոյ է եւ նորա բարձրագոյն հրամանատարութեան հաղորդակցութիւն մը, պէտք է ըստ օրինակի Աստուածային իշխանութեան ի գործ ածուի որ հայրական խնամօք հոգ կը տածէ թէ առանձինն իրաց թէ հանուրց վրայ: Հետեւաբար երբ վնաս մը եղած ըլլայ եւ սպառնայ կամ ընկերութեան եւ կամ նորա մէկ մասին, զոր ուրիշ կերպով հնար չըլլայ կասեցնել, յայնժամ կառավարութեան միջամտութիւնը հարկաւոր է: — Եւ կարի իսկ օգտակար է թէ՛ հասարակաց եւ թէ՛ առանձնականաց փրկութեան որ ամենայն ինչ խաղաղ ըլլայ եւ անգորբ. որ ընտանիքն բարեկարգ յօրինուի ըստ օրինաց Աստուծոյ եւ ըստ բնական սկզբանց. որ մեծարուի եւ ի գործ դրուի կրօնքը, որ հասարակաց եւ անհատից բարոյքն անարատ ծաղկին, որ արդարութիւնն անբռնաբար պահպանուի, որ քաղաքացեաց մէկ դասակարգը միւսը չխուէ. որ քաղաքացիք մեծնան առայդ եւ կորովի, որպէս զի կարող ըլլան ի հարկին օգնել եւ պաշտպանել հայրենեաց: Վանսորոյ եթէ գործաւորաց գործադադարի պատճառաւ ընդհանուր խռովութիւնք ծագին, եթէ սինըրդիին ընտանեաց բնական կապերն թոյլնան, եթէ աշխատաւորին կրօնքն բռնաբարուի, ժխտելով նմա բաւական ժա-

մանակ ի լրումն պարտուցն, եթէ տարբեր սեռի խառնակութեամբ եւ այլ հրապուրանօք ի չարն՝ գործանոցներու մէջ բարուց անարատութիւնը վտանգուի, եթէ տէրերն անիրաւ բռնորով ընկճեն եւ կամ անձնաւորութեան եւ մարդկային արժանապատուութեան հակառակ դաշամբը նուաստայնեն գործաւորաց դատը, եթէ արտաքոյ կարգի շատ եւ կամ սեռին ու հասակին չյարմարող աշխատութեամբ, աշխատաւորաց մնաս հասցուի՝ այս դիպուածոց մէջ պէտք է ի ձեռն առնուլ պարտուպատշաճ սահմանաց մէջ՝ օրինաց գորութիւնն եւ իշխանութիւնը: Այս սահմանները կ'որոշէ միեւնոյն պատճառն որ կառավարութեան միջամտութիւնը կը պահանջէ. այսինքն թէ օրէնքն չարեաց հեռացումէն կամ վտանգին մերժումէն աւելի ոչինչ ընելու են.

Իրաւունքն, որոց եւ իցէ անձին որ ըլլան պէտք է անեղծ պահպանուին. եւ հանրային իշխանութիւնը իւրաքանչիւր ումնք զիւրն արահովելու է. խափանելով եւ պատժելով անիրաւութիւնները: Բայց առանձնականաց իրաւունքը պաշտպանելու ատեն, տկարաց ու սղքատաց մասնաւոր ակնածութիւն ընել հարկ է: Փարթիանաց խումբն ինքնին զօրաւոր, շատ չկարօտիր հատարակաց պաշտպանութեան. ինեղծ ուսմիկն, որ յատուկ նեցուկ եւ ապաւէն չունի, դայն մասնաւորապէս ընդ հովանեաւ տէրութեան գանելու կարեւորութեան մէջն է:

Ասոր համար տէրութիւնն իւր խնամքն ու տեսչութիւնը դարձնելու է զլիաւորաբար գործաւորաց վրաց որք ի թիւ են տկարաց եւ կարօտելոց:

Բայց լաւ է ինչ ինչ մանրամասնութիւններու վրայօք յականէ յանուանէ խօսիլ: Որոց զլիաւորն է, թէ տէրութիւնք իմաստուն օրինաց ձեռօք պարալին առանձնական ստացուածն ապահովիլ: Այսօրուան օրս մանաւանդ որ ապերասան կըքեր բուռն յանդգնութեամբ կ'եռան, ժողովուրդք իրենց պարտուց սահմանին մէջ զատուելու են. որովհետեւ եթէ իրենց վիճակն բարեօքելու փոյթն թող արուած է հաւանութեամբ արդարութեան, այլ ոչ արդարութիւն եւ ոչ հատարակաց բարիքն կը հաւանին ուրիշին բանը յափշտակելու եւ ինչքը բռնարարելու, պատուաւաւ անհինն հաւասարակշռութեան: Յիրաւի գործաւորաց մեծագոյն մասը լաւագոյն վիճակ մը ի ձեռս բերել կը բաղձան առանց մէկուն անիրաւութիւն ընելու, կան սակայն ոչ սակաւք, որք սուտակասպաս սկզբունքներով եւ նորութեանց տենջանօք

լցեալ, անհրաժեշտ աղմուկները եւ խռովութիւնը հանել կը ջանան եւ ուրիշներն ալ բռնաբարութեան մղել: Միջամուտ ըլլայ ուրեմն կառավարութեան իշխանութիւնը, եւ խռովայոյց մարդիկն ասնձերով, բարեմիտ գործաւորները ապստամբութեան եւ օրինաւոր տէրերն զրկմանց վտանգէն պահպանէ:

Կարի երկայն կամ խիստ ծանրաբեռն աշխատանք ու նուազ կարծուած վարձքը ստէպ գործաւորաց դիտեալ գործաւորաբի եւ կամաւոր սրբապութեան առիթ կուտան: Կառավարութեան կիցնայ դարման տանիլ այս ծանր եւ յաճախ անպատշաճութեան. որովհետեւ այն գործադրարներն չէ թէ միայն տէրանց եւ գործաւորաց իսկ վնասաբեր են, այլ վաճառականութեան իսկ զխտվին եւ հասարակաց օգտին. եւ ընդ հանրապէս իրենց առթած խռովութեամբք եւ հարստահարութեամբք՝ յաճախակի կը վտանգեն նաեւ հանրային անգորրութիւնը: Յայտմ մասին ազդու եւ փրկարար դարմանն է օրինաց ճոխութեամբ չարին առաջքն առնուլ եւ նորին ծագումն կանխառ խափանել. նախապէս կարճելով այն պատճառներն, յորոց հաւանականաբար կրնայ գծտութիւն ծագիլ 'ի մէջ գործաւորաց եւ տէրանց:

Նամանապէս գործաւորը շատ շահեր ունի զոր պէտք է որ տէրութիւնը պաշտպանի, եւ նախ քան զամենայն հոգւոյ բարիքը: Զի մահկանացու կեանքն, թէեւ բարի եւ ցանկալի, սակայն մեր ըստեղծման պատճառը չէ. այլ ճշմարտութիւնը ճանչնալով եւ բարին գործելով հոգւոյ կեանքը կատարելագործելու ճամբայ մը միայն ու միջոց: Հոգին է յորում Աստուածեղէն պատկերն ու նամութիւնը զորչմուած է. եւ յորում կը պահակալէ այն իշխանութիւնը, որուն զօրութեմբ մարդուն հրամայուեցաւ իշխել ստորնազոյն արարածոց վրայ եւ իւր օգտին ծառայեցնել ամեն երկիրներն ու ծովերը: «Լցիք գերկիր եւ տիրեցիք դմա, եւ իշխեցիք ձկանց ծովու եւ բռնցնց երկնից եւ ամենայն սողնոց որ սողին 'ի վերայ երկրի»(1): Յայտմ ամենայն մարդիկ հաւատար են, եւ չկայ խտիր ի մէջ փարթամաց եւ աղքատաց, տէրանց եւ ծառայից, ինքնակալաց եւ հպատակաց. զի «Նոյն նորա է ամենայն»(2): Ո՛չ ումեք թոյլ տուեալ է բռնաբարել մարդու արժանապատուութիւնը, որուն վրայ Աստուած ինքնին «մեծաւ յարգութեամբ» կը արամադրէ. եւ ոչ իսկ խոչն եւ խուժիցնել այն կատարելութեան ճանապարհին որ յաւիտեանական կենաց

(1) Մ^{նք} Ա. 28

(2) Հ^{ոմբ}, Ժ 12

ստացման կարգեալ է: Նա մանաւանդ եւ ոչ ոք իրաւունք ունի իւր բնութեան արժանապատուութիւնը ոսննակոխ ընել կամ հաւանիլ իւր հոգւոյն ստրկութեանը. որովհետեւ մարդուն կամքէն կախումն ունեցող իրաւանց վրայ չէ ինդիրը, այլ պարտուց՝ որ առ Աստուած. եւ որոնք անբռնաբարելի են:— Աստի կը ծագի սօնի աւուրց հանդստեան կարեւորութիւնը: Որով անուամբ չիմացութիւր աւելի երկայն պարսպութիւն մը, եւ կամ շատերուն բազմացած դադարն որ գրգիւ է մոլութեանց եւ առիթ վատնելոյ, այլ հանգիստ մը յաշխատութեանց նուիրագործեալ 'ի կրօնից: Հանգիստը կրօնքի հետ միանալով զմարդ կը բաժնէ աշխատութիւններէն եւ հանապագորեայ կենաց զբաղմունքներէն. որպէս զի զանկիայ կոչէ 'ի խորհրդածութիւն երկնաւորն բարեաց, եւ 'ի սրբաւ եւ պատշաճն պաշտօն յաւիտենականին Աստուծոյ: Այս է զլիաւորարար բնութիւն եւ այս շարժառիթ տօնական աւուրց հանդստեան. զորն որ Աստուած նաեւ 'ի հին Կտակարանի մասնաւոր օրէնքով սահմանեց. «Յիշեսցիք զօրն շաբաթուց սրբել զնա» (1): Եւ իւր իսկ օրինակաւ ուսոյց, երբ՝ յեօթնէրորում աւուր, մարդը ստեղծելէն վերջը, ստեղծագործութենէն զազարեցաւ. «Եւ հանգեաւ յառաքին Եօթներորդի յամենայն գործոց իւրոց՝ զոր արար» (2)

Փալով մարմնաւոր ու արտաքին բարիքներու պաշտպանութեան, ամեն բանէ յառաջ պէտք է խեղճ դործաւորները ընչաքաղց մարդիկներու զաժանութենէն ազատել. որոնք շահու համար անկասիր կը զեղծութիւն չարաչար դործածելով մարդիկը: Իրաւունք չէ եւ ոչ իսկ պիտութիւն՝ այնչափ աշխատութիւն պահանջել, մինչեւ սաստիկ տաժանմամբ ողին բիժանայ եւ մարմինն վաստակաբեկ խոնջեալ նուաղիւ: Մարդուն զօրութիւնը իր բնութեան պէս սահմանափակեալ է. եւ թէպէտ մարդն եւ սովորութիւն զայն կը որեն, սակայն հարկ է երբէք երբէք դադար առնել ու հանդիլ: Ուստի օրական աշխատութիւնն զօրութեան զբաւելուն չափ ժամերով տեւելու չէ: Հանդստեան քանակութիւնը որոշելն կախումն ունի աշխատութեան որպիսութենէ, ժամանակին ու տեղւոյ հանգամանքներէն, եւ նոյն իսկ գործաւորաց կազմուածքէն ու առողջութենէն: Օրինակ իմն, քարի, երկաթոյ, պղնձի, եւ ուրիշ ընդ երկրաւ ծածկեալ նիւթոց հանքերուն մէջ դործողներուն աշխատութիւնը աւելի ծանր ու առողջութեան աւելի վնասակար ըլլալով

(1) Եւք. Ի. 8:

(2) Մ. Ն. Գ. Ի. Բ. 2:

ժամանակին կարճութեամբ փոխարինուելու է: Պէտք է նաև 'ի նկատի առնուլ տարւոյն եղանակները, որովհետև յաճախակի աշխատութիւն մը որ եղանակի մը մէջ տանելի է, ուրիշ եղանակի մէջ կամ ամենեւին անհանգուրժելի է եւ կամ կարի իննս զժողովներ: Ի հուսկն յարբունս հասեալ եւ քաջաբանջ էրիկ մարդու մը աշխատանքը, չկրնար անշուշտ կնկան կամ մանկան մը լրաց դրուել: Մանաւանդ մանկանց նկատմամբ պէտք է զգուշանալ եւ չընդունիլ զիրենք դորձանոցի մէջ, քանի որ դեռ հասակը զարգացողցած չըլլայ ըստ բաւականի նոցա մարմնական, մտաւորական եւ հոգեկան կարողութիւնները: Որովհետև ի մանկութեան իբրև դեռափթիթ ծագիլի՛ բացող զօրութիւնները կանխահաս եւ տարածամ յոյգը կը թարշամեցնեն. եւ յայնժամ անհնարին կը լինի նոյն իսկ դատախարակութիւն մանկանց: Այսոյէս նաև ինչ ինչ տեսակ աշխատութիւնք չեն յարմարիբ կանանց, որք 'ի բնութենէ արարեալ են յառտնին ձեռագործս, որք մեծապէս կը պատուարեն տկար սեռին պարկեշտութիւնը. եւ բնականաբար կը համապատասխանեն որդեոց կրթութեան եւ տան բարեկեցութեան: Ընդհանրապէս այս կանոնը իբրև հիմ դրուի որ, զործաւորին այնչափ հանդիստ չնորհելու է, որչափ յաշխատութեան կորուսած ոյժին հետ կրնայ փոխարինուիլ. որովհետև զործածելով սպառեալ զօրութիւնը պէտք է հանդատեամբ կազդուրել: Գործաւորաց տէրերու միջեւ դրուած ո եւ է զաշնադրութեան մէջ միշտ բացայայտ կամ լռելեայն կ'իմացուի երկու հանդիստն ալ. ամեն օր դադար մը եւ հանգիստ 'ի տէրունական աւուր, հակառակ դաշինք մը անբարոյական կըլլայ. ոչ ումեք օրէն ըլլալով ինչոյ՛կ կամ խոտոտանալ առ Աստուած եւ առ ինքն եզող պարտուց խղումն ու բռնաբարումը:

Այժմ կարևոր խնդիր մը կայ մեզ առաջի, զոր հարկ է լաւ իմանալ երկու ծայրայեղութեան մէջ չիջնալու համար: Կ'ըսուի թէ վարձու չափը ազատ հաւանութեամբ կը սահմանուի. այնպէս որ տէրը վարձքը հատուցանելով իր պարտքը կատարած եւ առ ոչ այլ ինչ պարտական զանձն կը համարի: Միայն երբ տէրը ամբողջ վարձքը չի հատուցաներ եւ կամ զործաւորը աշխատութիւնը չի կատարեր, յայնժամ անիրաւութիւն գործուած կ'ըլլայ, եւ միայն այս իրաւանց 'ի պաշտպանութիւն՝ եւ ոչ ուրիշ պատճառի համար օրէն է միջամտութիւն տէրութեան:— Ուղղամիտ իրաւբնափր մը չկրնար այս պատճառարանութեան ոչ հեշտուա եւ ոչ ըստ ամենայնի հաւանել. որովհետև նոյնը զինչդիրը ամեն կողմէ չի նկատեր. ծանրակշիռ խորհրդածութիւն կը պակօի իրեն: Աշխատութիւնն է

գործունէութիւն մարդկային՝ կարողեալ 'ի հայթայթել զպէտս կենաց մանաւանդ զանձնիւր պահպանութիւնս. «Յրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո» (1): Ուստի աշխատութեան մէջ կան զոգցեա երկու կնիք գորշմեալ 'ի բնութենէ. այսինքն անձնայն, որովհետեւ գործիչ զօրութիւնը անձին կից եւ անբաժին եւ ամենեւին սեպական է այնմ որ զայն կ'արտադրէ եւ որուն տրուած է յօգուտ. երկրորդ. հարկաւոր անոր համար որ աշխատութեան պտուղն սկստոյ է մարդուն իւր կեանքը պահպանելու համար. իսկ այս կենաց պահպանութիւնը բնութեան զրած սրբազան պարտքն է: Արդ'եթէ զխոտի միայն անձնայնութիւնը, անտարակոյս գործաւորը կրնայ դաշնադրել վարձք մը որ պատշաճէն վար ըլլայ, քանզի ինք իր կամաւ աշխատելուն պէս կրնայ նաեւ՝ եթէ ուզէ, թեթեւ օրականով մը շտտանալ կամ ամենեւին իսկ յայտմանէ հրաժարել: Այլ բորբոքովն այլազոյ պէտք է դատել եթէ անձնայնութիւնս հետ յօգուտի նա եւ հարկաւորութիւնը, որ անկէ միայն մտածմամբ եւ ոչ իրօք բաժանելի է: Եւ յիրաւի՝ մնալն 'ի կեանս՝ իւրաքանչիւր ումեք հասարակ պարտք է, որոյ զանցառութիւնը ոճիր մըն է: Աստի ուրեմն հարկաւորապէս կը ծագի սպրուստի միջոցներն հայթայթելու իրաւունքը. եւ այն՝ աղքատ դասու համար իւր աշխատութեան վարձքն է:

Գնենք ուրեմն թէ գործաւորն ու աէրը համաձայնին եւ նաեւ որոշին վարձքի որքանութիւնը. սակայն եւ այնպէս կայ անդ միշտ բնական արդարութեան մէկ տարրը. որ դաշնադիրներու ազատ կամքէն մեծազոյն ու հնազոյն է. այսինքն թէ՛ վարձքին քանակութիւնը՝ անշուշտ սակաւապէտ ու բարեկենցազ գործաւորի մը պահպանութեան համեմատ ըլլալու է. եթէ սա 'ի կարօտութենէ ստիպեալ եւ կամ մեծազոյն չարիքէ մը վախնալով, ընդունելու ըլլայ աւելի աննպատու եւ խիտու դաշինք, զոր կամայ ակամայ հարկ է ընդունիլ քանի որ կալուածատէրէն կամ գործառուէն կը սահմանուին, այդ այնպիսի բռնաւորութեան մը ենթարկուել է, որոյ զէմ արդարութիւնն բողոք կը բաճայ: Սակայն այսպիսի եւ նման զիպուածոց մէջ, որպիսի են՝ որ եւ իցէ արուեստի մէջ աշխատութեան օրական տեւողութիւնը, գործանոցներու մէջ ձեռագէտին կեանքն ապահովելու համար ձեռք անուակելիք զգուշութիւնք. որպէս զի չըլլայ թէ ոտտիկանութիւնը անպատշաճօրէն միջամուխ ըլլայ:

(1) Մն. Գ. 19.

մանաւանդ իրաց, ժամանակաց ու տեղեաց այնչափ զանազան պարագայից մէջ, բաւական պիտի ըլլայ ասոնց որոշորութիւնը յատկացնել այն ժողովներու, որոնց վրայ 'ի ստորեւ պիտի խօսինք. կամ այնպիսի ճամբայ մը բռնել որ ըստ արդարութեան գործաւորին իրաւունքներն ապահովէ, եւ 'ի հարկին սէրութիւնն ալ պաշտպանութիւն եւ օգնութիւն մատուցանելով:

Երբ գործաւորն զանձն եւ զընտանիս հեշտեաւ պատասպարելու բաւականաչափ վարձք մ'ընդունի, եթէ մտացի է, անշուշտ խնայութիւն պիտի ընէ, եւ ըստ յորդորանայ իսկ ընտելեան պիտի աշխատի որ ծախքերէն բան մը աւելնալով փոքրիկ ստացուած մը ձեռք բերէ: Որովհետեւ ապացուցինք որ գործաւորական խնդրոյն գործնական եւ ազգու լուծման համար անհրաժեշտ է ստացուածոյ իրաւանց անըն նաբարելիութիւնը: Ուստի օրէնքն կը պարտին այս իրաւունքը պաշտպանել. եւ այնպէս ընել որ միշտ աւելի աճի ստացուածատեարց թիւը: Որմէ մեծամեծ օգուտներ պիտի ծագին անտարակոյս. եւ ամենէն առաջ ընչից աւելի արդարացի բաժանումը: Զի քաղաքական վրդովմանց եւ խառնաշփոթութեանց բնութիւնը, քաղաքներու մէջ քաղաքացիները երկու դասերու բաժնեց, որոց միջեւ անձուն վիճ մը բացաւ: Ի միոյ կողմանէ խուճը մը հզօրացոյն, զի փարթամալոյն, ոյն որ իւր ձեռաց մէջ ամփոփած լինելով ձեռագիրտական եւ վաճառականութեան ամեն տեսակ շահերը, հարստութեան ամեն աղբերակունքն յօդուտ իւր դարձուցած է, եւ կառավարութեան մատակարարութեան մէջ ալ մեծ ազդեցութիւն ունի: Յայոց կողմանէ կարօտ եւ ապիկար բաղմութիւն մը որ յոգի խոցեալ է կարելիէր եւ միշտ պատրաստական ի յոյզս խռովութեանց: Արդ եթէ այս բաղմութեան մէջ նար մղում մը տրուի ճարտարութեան յուսով ի ձեռս բերելու անշարժ ստացուած մը, տակաւ առ տակաւ երկու դասակարգեր իրարու պիտի մօտենան, ջնջուելով ի միջոյ յետին փարթամութեան եւ յետին ազքատութեան անբաւ անպունդը: — Բայ աստի, երկրէն շատ աւելի առատ բերք պիտի ստացուի: Երբ մարդիկ դիտեն թէ իրենց յատուկ երկրին մէջ կ'աշխատախն, աւելի փոյթ եւ եռանդն կ'ունենան, նա զի եւ իրենց մշակած արտին սէր կը կապեն, որմէ կ'ախնկալեն ապրուստէն զատ նաեւ տեսակ մը բարեկեցութիւն: Եւ անշուշտ այս փոյթեռանդն աշխատութիւն մեծապէս կ'օգտէ բերքերու առատութեան եւ ընդհանուր ունեւորութիւնը անկցնելու: — Երբորդ օգուտ մըն ալ

ծնծղաւայրին յարունն է. վանդի հայրենիքն չէր փոխանակու-
 էր օտար երկրաց հետ, եթէ բաւականաչափ պարենի հայթայ-
 թումն կարելի ըլլար: Պէտք է սակայն մտադիր ըլլալ որ օդունն
 ընն այն ատեն միայնկերանն 'ի ձեռս բերուիլ, եթէ անանձնական
 եկամուտը տուրքերու եւ մաքսերու չափազանց առաւելութեամբ
 չ'անհետանան: Որովհետեւ սեպհականութիւնն ունենալու իրա-
 ունքը. ոչ թէ 'ի մարդկային օրինաց այլ 'ի բնութենէ արուած
 ըլլալով, կառավարութիւնը չկրնար զայն բնաւին ջնջել, այլ
 միայն նորին գործածութիւնը չափաւորել եւ հատարակաց բար-
 ւոյն հետ հաշտեցնել: Ուստի անիրաւ է եւ անգութ, եթէ առ-
 անձնականաց ստացուածքներէն, տուրքի անուամբ առաւել քան
 զարժանն բռնաբար հատցթ պահանջուի.

(Շարայարեյի)

Թարգմ.

Գեորգ Վ. Թերզիպաշեան

ՊՈԲԼԻՈՍԻ ՈՎԻԴԵԱՅ ՆԱՍՈՆԻ

ՏԻՐԱԿԱՆՔ (*)



Եղերերգութիւն Բ.

ԸՆԾԱՅՈՒԹԻՒՆ. — Ըստ հրամանի Աւգոստոս կայսեր յուզի անկեալ
 զնալ յօտարութիւն՝ ըմբռնի 'ի մրկէ 'ի Յոնիական ծովուն, մինչև նուին
 ծածկել յալեաց անտի: Աղաչէ և պաղտաի զգիս՝ զի գէթ ինքեանք ար-
 գահատեալ անխայեցեն յանն իւր, և մի՛ համամիտք համակամք ընդ
 կայսերն անգնդասոյլ ծովակուր զնա կորուսցեն: Բազում հաւատեօք
 ցուցանէ թէ կարող են գործել զսոյդ. ապա առնէ զնկարագիր արեկոծու-
 թեան, եւ հուսկ յետոյ հայցէ զաստուածս զի ողջանդամ հասուսցեն զնա
 յերկիրն Տոմիտայց:

Երկնից ծովու դիք պահապանք՝ զի՞նչ ինձ մեղան բայց ուխտք
 միայն.

Խնայեցէ՛ք ի քակտեղոյ ըզծովածուսի նաւուս լզկողոյ.

Աղաւթեմ՝ մի՛ լինիք հաճ ընդ մեծ գայրոյքն Կեսարու:

(1) Տե՛ս Պատկեր. Ա. քարէ. էջ 534

Մերք ուրուք լըկեալ ի դից՝ յօգն հասանէ միւս որ աստուած,
 Մինչ դեմ Տրովայ կայր Հեփեստոս, էր Ապոլոն ի նորին քեր,
 Արդարազատ եղէ. Աստղիկ Տեւկրեանց (1) ոյց էր անհաշտ
 Պայլաս:
 Քան ըզՏոռոնու լեալ մերձաւոր՝ ատէլ ատեր Հէրա գէն-
 էաս,
 Այլ սա ընդ հովանեաւ. դիցն Աստղրկան կայր յապահովս,
 Թեպէտ յաճախ խեռ. Պիսիբոն ըզհետ պընդէր գգօն Ո-
 դիսեայ,
 10 Ստեպ Աքեմաս բափեաց ըզնա ի հօրեղբօր(2) իւրոյ ձեռաց:

Ե. զի՞նչ արգէլ կայցէ ի մէջ՝ քեպէտ իցեմք յայնց հեռագոյն՝
 Զի յաստուածոց որ միջնորդ լիցի կայսեր լիւր մեծ ցաս-
 ման:
 Այլ ինձ եղո՛ւկ հիբացելոյս, ի գուր են բանքս աղաչանաց,
 Լեռնակրտտակ բանան ալիք զիմ ըզըրբոսն էւ ըզբերան,
 Սասկաշունչ հարաւահողմ տանի ցըրուէ գճայն բարբա-
 ույս,
 Եւ ոչ տայ բոյլ աղերսանացս՝ առ. որս ուղղին ժամանէլ
 դից:
 Աւա՛ղ, յո՞ վարեն հողմք էւ բըռչարանք առագաստից
 Զուխտըս սըրախս, զի պատուհաս իմ էսս քան գէս յա-
 ճախեսցի.
 Վա՛յ բըշուստիս՝ քանի՛ լերինք շուրց կոհակաց բաւային
 շուրջ

20 Գոզցես զի լերկիներս խարանարդ հըպիմք մատամք.
 Քանի՛ նորք անդընդախորք ի խռովայոյզ բանան յալիս,
 Իբրոս այն քէ կոխիցեմք գալսըն խաւար Տարտարոսին:
 Տեսիլ համայն հանդէպ աջաց՝ համատարած ծով էւ երկին,
 Մին ուռուցեալ դիզան ալեօք, միւսն ամպրոպաց ըսպառ-
 նայեօք.

(1) Ի՞նչ՝ Տրովացոց, որք այսպէս կոչեցան յանուն Տեւկրեայ էջնանի
 աշխարհին այնորիկ:
 (2) Քանզի Ալեքնաս գասարք էր Աբամպոզայ՝ Եղբօր Պիսիբոնի:

Ահեղագոջ ի մեջ երկուց հողմունք աստի շրջէն անտի,
Կոհակն ինքնին գիտե իսկ ոչ ո՞յր հնազանդել բռուն հը-
րամանի:

Է՛ զի Եւրոս ի բըրբմափայլ արեւելից խուծե ծագաց,
Է՛ զի գեփիւռ մըրըկածին հընչէ օղովք յարեւմըտից:

Մէրք հիւսիս ի բըռնաշունչ մօշնչէ ցասկոտ ի ցուրտ
Սըջոյն,

- 30 Մէրք հարաւ ընդդիմամարտ ելեալ ի վեգ մըղէ ճակատ.
Վարանի նառուդիդն յո՛ր կոյս փախչել կամ յո՛ դիմել.
Զարհուրի նառագնաց գնացից արուեստ յերկբան ջարեացս.
Հասեալ կայ մահ մօտալուտ, ի նանիք յոյսն է փըրկու-
րեան:

Ի խօսել իմում աղի կուտակ այեաց ծածկէ ըզդմն,
Գոգ կոհակն հաշէ ըզկեանս, ի գո՛ւր իմ շուրքն աղօթա-
կեր,

Ընկլայց ի մահածին կուտակադէզ ջուրս անդընդոց:
Գորովայիր ամուսնոյս ցաւոց պատճառք յո՛կ իմ աքորք,
Զայս եւեք ճանաչէ, հեծէ կոծի ընդ դառն աղէտս.

Անգիտանայ զի մեր ոգիք յայնածառայ ծովուն ի խորս

- 40 Ի տատանի կան ի հողմոց եւ մերձ առ դուրս հասեալ
օրհաս:

Գոհութի՛ն անմահից՝ զի ջետու քոյլ նմա գալ ընդ իս,
Էր ինճ յայնժամ ջուտուէրոյս կըրկին անգամ ճաշակել
մահ:

Իսկ այժմիկ զի ինքն անփոյք եւ անվըտանգ կայ յանդոր-
րու,

Թեպետ մեռայց՝ գեթ կիտով ջափ եղեց ի նմա կենդանի:

Վայ՛ ինճ հիքոյս, քանի՛ յարագ հրաշէկ ի բոց փողփողին
ամայք,

Ո՞րպիսի որոտանայն շաջիւն բոմբիւն ճայքէ յերկնից:

Զուրք դեգադէզ ոչինչ ընդհատ բախեն ըզկողս յաստա-
փայտիս,

Քան զմանգղիոն որ յաղք բեռամբն հարկանիցէ զամուր
պատմեշ:

Որ յանդիման մերձի կոհակ անցոյց գանցոյց գամենէրումբբ,
50 Մեծադեզ երեքսլեան պարուտակեալ յաջորդին վերո:

Ձերկընջիմ ի մահուանե, այլ այս օրհաս ե ջուտուազոյն,
Բարձցի ի բաց նաւակոծումն՝ յայնժամ պարգէս լիցի ինձ
մահ.

Է շնորհն արդարեւ բաշխիւք բախտին կամ սուսերաւ
Անկերոյն հանգչէլ ի ծոց ծանօթ երկրին ըզկնի մահու,
Ըզվերջին մերձաւորաց աւանդել բան, յուսալ բաղման,
Եւ մի՛ կէր եւ կուր լինել ճրկանց ծովու եւ յուղակաց:
Թե անարժան եմ կերոյ, այլ չեմ միայն նաւաղօղակ.
Ընդէ՛ր պատիժ պատուանսիս հարցե յանխնայ գամմեղ ու
գիս,
Դիք վերնականք եւ կապուտակ դաշտին աստուածք՝ ոյց
հոգ ծովու,

60 **Ձ**երկաբանջիւր դասղ աղաչեմ՝ դադարեցե՛ք ի սպառնալ-
եաց,
Ըզշունջ կենաց գոր մեղմագոյն ետ ինձ կայսեր սրբումը-
տութիւն
Շնորհեցե՛ք ըզնոյն հիբոյս մինջ ի սահմանս արտրանաց:

Իսկ գարժանին եթե կամիք զի ես յածից ըզվրեծս արդար,
Նուսագագոյն քան գման յանցուածս ե՛ որպէս յայտ արար
կեար.

Ձի բե կամեր վաղ ի ստիւգեան(1) զիս խորասոյց առնէր
յայիս,
Եւ ոչ իւր կարօտեր նա ճերումդ անշուշտ օգնութեան.
Է իսկ նորա անաչառ կենաց մահու իշխանութիւն,
Եւ ըզկեանս՝ գոր ինձ շնորհեաց՝ յորժամ կամի անդրէն
բառնայ:

Այլ դուք անմահք, ոյց ապաքեն ճեղէ երբէք վընասապարտ,
70 Շատացարո՛ւք՝ աղաչեմ՝ չարալըլուկ իմ աղետիւքս,
Թե եւ համայնբըղ ճըզնիցիք վրդկել ըզջուտուս յայս ար-
կածից՝

(1) Ստիւգեան ե գեոր դժոխոց:

Ձե ինչ մարք կորուսելոյս զկենդանութեան ծըծել զօդ,
Եթէ ծովն հանդարտեսցի, թէ հողմք յաջողք մըդեսցեն զիս,
Թէ յիս բըշուսուս անխայիցեք՝ Եղե՞ց նըւագ վըտարանդի:

Ո՛հ երբեր ի մըթերել ինձ գանձս ոսկւոյ եւ արծաթոյ
Կամ ի լինել շահավաճառ, ալօսեմ զայս ծով լայնանիստ.
Ո՛հ որպէս երբեմն յԱթենս ատ սեր ուսման դիմեմ էրբամ,
Ո՛հ ի քաղաքս Ասիացոց, կամ այց առնել ծանօթ վայրաց,
Ո՛հ գերեսս հաստատեմ զնայ ի քաղաքն Ալեքսանդրու՝

80 Կալ ի զընին հաճոյ Նիլէ գուարձատեսիլ քոց հոսանաց:
Ո՞ կարիցէ հաւատայ թէ յաջողակ անձկամ հողմոց
Առ ի փութով հասանել յաշխարհն հեռի Սարմատացոց.
Յանկամս հըպիմ յահեկին (1) վայրագ ափունս Պոնտոս
ծովուն,
Եւ բըրքմընջեմ զի անագան ի հայրենեսցս իցէ փախուստ.
Անգիտանամ թէ Է՞րբ տեսից գերկիրն օտար ըզՏոմիտայց,
Համառօտ գործեմ իմովք ըղձիւք գուդի նաւարկութեան:
Թէ զիս սիրեք՝ օ՛ն ցածուցեք ըզյեռնաձէս գալեսց կոհակս,
Երկնային ձերդ օգնութիւն լիցի ծաման ծըփեալ նաւուս.
Խակ թէ ատել ատեք զիս՝ փո՛յթ հասուցեք յաշխարհն ի
տար,

90 Անդ հատուցանել ըզվիշտս ի վայրն ինձ սանմանեալ:

Օ՛ն բընաշունջ տարա՛յք զիս հողմք, ընդե՞ր ուրեմն յապա-
դեմք աստ,
Հի՛մ յափունս Աւստնեան հային երկրին մեր առագաստք.
Ձը հաճի ընդ այս կեսար, ըզմե՞ ունիք գոր նայն վանէ.
Իցի՛ւ ալանողիքս նըշմարեին գեզը Պոնտոսի.
Ա՛յս իւր հրաման իրաւ արժան, ջե՛ բնաւ օրէն եւ ոչ
ըմբոն
Կալ շատագով յանցաւորին գոր ինքն արդէն պարտա-
ւորեսց.

(1) Ձէ +ուզա՛ն Տո՛մ՝ որեղէ +տարանայ +երջնողէն՝ կայ ընդ ունեկէ
նաւարկին ՚ի Սեւա ծով:

Իսկ թէ երբեք արարք մարդկան ջեն ինչ գանխույ յաստ-
ուածոց,
Քաջ հասեալ է մեր՝ գեղեուն հեռի լինել ի յանցուածոյս:

Հա՛պա յիս խնայեցէք թէ ճանաչէք զի վրիպեցայ,

100 Թէ եւ ընդ խօլ ինչ գործեցի՝ այլ անօրէն եղէ իսկ ոչ.
Թէպէտ տրուպ որ իցեմ՝ թէ օգնեցի տանն արքունի,
Երէ հնազանդ եղէ վճռոյն օգոստափառ. Կայսերն իսկոյն,
Թէ ընդ հըզօր իւր տերութեամբ դարս երջանիկս աւետեցի՝
Մատուցեալ փոխան Կայսեր խունկս համօրէն իշխանա-
գանց.
Թէ ապաքեն ա՛յս իմ խորհուրդք՝ յիս խնայեցէ՛ք ո՛վ դիք
վերինք.
Ապ՛ երէ ոչ՝ լեառնացեալ զիս ծածկեսցէ այեակ կոհակ:

Միթէ խաբի՛մ, քանճրախիտ ամպոց կուտակք արդ փարատին,
Եւ գիջեալ ծովուն գայրուցք գամ քան ըզգամ մեղմանայ.
Ոչ ըստ դիպաց պատանի այդ, այլ անտուտ դիցն օճանաւ.
110 Զոր պայմանաւ կարդացի. ճողոպրիմ այժմ ի վըտանգես:

Թարգմանեաց ի Լատին ճնադրէն

Յ. Վ. Մխչեան

ՍԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴՈՑ

Կ Ր Օ Ն Ք Ը

Ասորեստանացիք

Այն ժողովուրդը որ այնչափ երկար ստան ասաջակողման Ասորի մէջ իւր գերազանութիւնը պահեց ծագմամբ Սեմական էր. բայց իւր հակառակորդին, Բաբելոնի հետ իւր երկայն գուպարին մէջ, դադարաբայ փոխադարձ փոխանակութիւն մը տեղի ունեցաւ, եւ քիչ ատենէ երկու քաղաքակրթութիւնք ունեցան մի լեզու, մի գրութիւն եւ մի հասարակաց կրօնք միայն:

Այսու ամենայնիւ Նինուէ եւ Բաբելոն պահեցին իրենց սեպական բարոյքը, այս կերպով յայտնի ընելով իրենց տարբեր ծագումը, եւ մինչդեռ Սեմականք իրենց պատերազմական բնազգմամբ՝ զՔաղզէացիս կը գերազանցեն, այս վերջինները վեհագոյն են զիտութեանց եւ արուեստից մշակութեան մէջ:

Ասորեստանեան-Բաբելական աստուածամտութեան մէջ ո՞րն է արդեօք այս երկու ժողովրդոց իւրաքանչիւրին պատկանող մասը: Դժուար է դայս ճշգրտելը շատ կէտերու վրայ, եւ այս տեսակ խուզարկութիւններ զմեզ շատ հեռու կը տանին:

Ասկից վատ պէտք է նկատել որ Միջագետաց մէջ (1) Տուրանեան (Touaronien) ժողովուրդ մը կը բնակէր Սեմականներէն առաջ, ու արդէն ունէր իրեն յատուկ քաղաքակրթութիւնը, ինչու որ նա սեպածեւ զրերը կը ճանչնար, զորս առին Ասորեստանացիք եւ յարմարցուցին իրենց լեզուին:

Արձանագրութեանց՝ այս Սումիրք (Soumirs) եւ Աքքատք (Accads) կոչած ժողովուրդները իրենց յատուկ կրօնք մը ունէին որուն վրայ քանի մը յիշատակարաններ մնացած են մեզ:

(1) Թուրան, Touran, էլ համապարսեանէ այսօրոսան Թրքստանի Turkestan.

Այդ կրօնքն կը կայանար մանաւանդ դիւթութեանց եւ չար ուղիները հեռացնելու համար մոզական բանաձեւութեանց մէջ:

Ըստ այս ժողովրդոց միամիտ հաւատոյն, այդ չարագործ գորութիւնները ամեն տեղ կը գտնուէին, ոչոց մէջ, երկրիս վրայ, բազմամարդ քաղաքաց մէջ ինչպէս նաեւ անասրատից մէջ, անոնց կը վերագրուէին ամեն թշուառութիւնք եւ ամեն չար գործքեր. անոնք ամեն տեղ կը մտնէին նոյն խոկ մարդոց մարմնոյնմէջ եւ կը պատճառէին ցաւ, հիւանդութիւն եւ մահ:

Մեռեալք խոկ չար ոգւոց կը փոխուէին ուրուականի ձեւի տակ, մարդիկը լիկելու չարչարելու համար:

Այս գձուձ եւ անձուկ կրօնականութիւնը Մեմականաց բարձր մտաց վրայ մեծ ազդեցութիւն մը չի ներգործեց. յայտնի է սակայն որ Սումիրներու եւ Աքքասներու կրօնքը սպրդեցաւ Մեմականաց մէջ, այս բանիս վկայ են քանի մը աստուածութեան անուանք.

Ամեն Մեմական ժողովրդեան քով կը գտնուի միշտ միաստուածեան պաշտամունքը ըստ ժամանակին եւ ըստ տեղւոյն առաւել կամ նուազ անվթար, առաւել կամ նուազ եղծեալ:

Ատրեստանեան—Բաբելոնեան կրօնից մէջ Իլու (Ilou) գերագոյն աստուած եւ ամեն գոյութեանց աղբիւրն է: Նինուէի մէջ նա Աստուր կը կոչուի եւ այն անուամբ գերագոյն պաշտաման առարկան է:

Նինուէացի թագաւորներէն մեղի մնացած գրեթէ ամեն արձանագրութիւնք, պաշտպան աստուածոց ուղղեալ աղերսով մը կ'սկսին: Ահա օրինակ մը որ կ'ապացուցանէ Աստուրի գերագունութիւնը եւ միանգամայն կը յիշէ աստուածոց անունները որոնց վրայ վարը պիտի խօսինք:

Ասի թակզաթբաղասարի պաշտան մէջ գտնուած արձանագրութիւն մ'է. «Աստուր, մեծ աստուած, դու որ կը վարես աստուածոց լեզէնները, դու որ կուստս գաւազանը եւ թագը եւ կը հաստատես թագաւորութիւնը.

«Տակոն, տէր, թագաւոր աշխարհի, աստուած Աննուադէներուն (երկրորդական ուղիներ), հայր աստուածոց, տէր երկրի.

«Սին, աստուածութիւն սուրբ, թագերուն աստուածը, դու որ ցօղը կը սփռես.

«Սամառ, դատաւոր երկնի եւ երկրի, դու որ թշնամեաց խորհուրդները կը ցրուես.

«Պին, պահապան աշխարհի, դու որ կը հեղեղես ապստամբաց երկիրները, ընծները եւ ձորերը.

«Ատար-Սամաան, հզօր աստուած, դու որ կը տապալես թշնամիները եւ կուտաս քաջասրտութիւն.

«Իսթար, թագուհի դշխոյ աստուածոց, զիցուհի յաղթութեան, իրաւարար սրտերազմաց».

Ստորեւտանեայց պաշտաման մէջ դերագոյն աստուծմէ վար, կուգայ առաջին երեքութիւն (triade) մը, որ կը բաղկանայ Անուէ, Պելէ եւ Մեաէ, (Անու, Յունաց Օաննէնն է):

Անու ընդհանրապէս մեծ երեքութեան աստուածոց ամենահզօրը անուանեալ է, նա ամենէն ահարկուն է եւ եօթը չար ուղիները որ կը խռովին աշխարհս իւր պատգամաւորներն են, նա նկատուած է իբր սուղծիչ երկնից ամենաբարձր շրջանակին, այն ուր աստուածները կ'ապաստանին լուսնոյ ստեղծ.

Այն անուանի սեպպիր տախտակին մէջ, ուր արձանագրուած է ջրհեղեղին պատմութիւնը, ինչպէս որ անանգութիւնները զայն պահած էին, կը կարգացուին այս բաները.

«Մարդոց վրայ համող այս մեծ ջրհեղեղը մինչեւ երկինք ելաւ: Եղբայրը ալ զիւր եղբայրը չի սեռաւ, մարդիկ ալ զիրար չէին ճանչնար.

Երկնից մէջ, զիւր փոթորկէն վախցան եւ ապաստան մը վնտոնցին. անոս յիշուաւ Անուէ երկնքը եւն».

Բեկ (որ նաեւ Բեկ-Տակոն կը կոչուի եւ այն ատեն ձուկ-աստուծոց ձեւակերպութիւնը կը զոնու) Անուի եղբայրը կամ բրտխումը, Ասորեստանի մէջ խորին պաշտաման մը առարկան էր:

Արձանագրութիւնը զայն շատ անգամ կը կոչեն երկրին տէրը, տիեզերաց թագաւորը եւ նոյն իսկ աստուածոց հայրը: Չայն կը նկատէին մանաւանդ իբր ոգւոց եւ մեռելոց աստուածը եւ տրամաբանական հետեւութեամբ մը, իբր զժոխոց աստուածը.

Մէա (կամ Ա.Օ) որ Պին ալ կը կոչուի, Ստորական երեքութեան բարերար աստուածութիւնն է, անի բնութեան, երկնից բեղմնաւորիչ ջրոց աստուած է: Ասկէ զայն իբր ուղիւստի Աստուած պաշտելու համար միայն մէկ քայլ մը կար:

Միւսնոյն ժամանակ նա աշխարհիս տէրն է եւ նորա վերաբերող ամեն բանի, անոր համար արձանագրութիւնը զայն երբեմն երկնից եւ երկրի տէրը կը կոչեն:

Յայտնի կը տեսնուի ուրեմն որ Ասորական երեքութիւնը (triade) Քրիստոնեայ վարդապետութեան Երրորդութեան հետ (Trinité) չի կրնար բաղադրուիլ համեմատիլ: Մինչդեռ այս վերջինը մի է իւր էութեանը մէջ, Ասորեստանի մէջ ընդհակառակն՝ իրարմէ բոլորովին տարբեր երեք աստուածք կան, որք ըստ յիշատակարանաց ոմանց իրարմէ կը բխեն, եւ ըստ այլոց իրենց սեպհական ծնունդը ունին:

Սահայն Անու, Բել, Ծէա ասորական պաշտաման մէջ շատ որոշ դեր մը չունին. իրենց աստորդելիքը ստէպ կը փոխուին կ'այլալին եւ երբեմն հակասութիւն կայ անոնց իւրաքանչիւրին գերագունութեան մէջ:

Այս առաջին երեքութեան կը համապատասխանէր իզական երեքութիւն մը. Անադ (Anat) Անուի երկատուութիւնն (այսինքն իզական դէմքն) էր (dédoublement) Պիլիդ՝ Բելինը, Թաաութ Ծէաինը: Բայց այս գիցուելիք իրենց յատուկ դեր մը չունէին ասորական համայնաստուածութեան գիւցահանդէսին (Պանթէոնին) մէջ. անոնք ուրիշ բան չէին եթէ ոչ օգոստափառ ամուսնոց յորումը:

Երկրորդ երեքութիւն մը, որ կը բաղկանար առաջնոյն երեք մեծ աստուածներուն որդիներէն, Ասորեստանեայց պաշտաման մէջ ասկէ վերջը կուգար:

Բամանու (կրբեմն Պարքու կոչուած), Անուի որդին միջնորդին աստուածն էր, եւ հետեւաբար անոր վերաբերեալ օգերեւոյթներուն, ինչպէս են փոթորիկները եւ մերիկները: Ասի ահարկու աստուած մ'էր, որովհետեւ կայծակին աստուածն էր, որ Ասիոյ տաք երկիրներուն մէջ, այնչափ ստէպ մահ կը պատճառ է: Իւր ընկերները Անուի եօթը պատդամաւոր ուղիները անոր հրամանները կը գործադրեն եւ փոթորիկները կ'արձակեն:

Սամաս (արեգական աստուածը) Ծէաի որդին է: Չայն ստէպ կը կոչէին, անոր ստէպ կը պաղատէին գիւթութիւնները ցրուելու համար: Եւ արբարեւ անի խաւարը վարատող ճառագայթն է, խաւարային ժամերն զոր կը սիրեն ուրուականք:

Մին, մեծ Բելայ որդին, լուսնոյ աստուածն է: Նա գլխաւորապէս կը պաշտուէր Ուր քաղքին մէջ որ իրեն նուիրուած էր շատ հին ժամանակէ ՚ի վեր:

Այս երկու երեքութիւններէն վար, կուգային կ'աստիճանաւորուէին ասորին կարգի աստուածութիւնը, որոնց մէջէն սի-

տի անուանենք հինգ մոլորակաց աստուածները որ են: Մինք (կամ Աստր-Երեւակ) Մերոտաք (Արամազդ Jupiter) Ներկալ, պատերազմի աստուածը, (Արես Mars), Իսթար, (Աստղիկ Venus) եւ Նեպօ (Հերմէս Mercure):

Նինիք (հօրը) նաեւ Սամսամ կոչուած, յորջորջուած է տէր քաջաց. տէր զօրութեան, ջնջիչ թշնամեաց: Անի է զոր կը ներկայացնեն Լուսիի թանգարանին այն հսկայներն որ իրենց բազկաց մէջ առիւծ մը կը խեղդեն:

Իսթար, կը պաշտուէր երկու կերպարանքով, նա պատերազմող եւ սղջախոհ զիցուհին էր. Անուի աղջիկը, կամ սիրոյ եւ գեղեցկութեան զիցուհին հեշտատէր եւ արդասաւոր, եւ այն պարալային մէջ կը նկատուէր իբր զուսար Սինի՝ լուսնոյ աստուծոյն: Արուսեակ մոլորակը՝ իբր ասող առաւօտեան, նուիրեալ էր ողջախոհ զիցուհոյն, իբր ասող երեկոյեան, զիցուհոյն սիրոյ:

Բաբելոնի մէջ Մերոտաք՝ նոյնչափ խորին պաշտաման առարկան էր, որչափ Նինուէի մէջ Աստուր: Նաբուգոդոնոսոր թագաւորը չքեղ հոյակապ տաճար մը շինել տուաւ, որուն մեծագործութիւնները չքեղութիւնները Բաբելոնի մէջ գոնուած սեւաւ երկաթաքարի հատորի մը վրայ փորագրուած երկայն արձաւ նագրութեան մը մէջ կը նկարագրէ:

Ես նորոգեցի, կըսէ նա, գերիշխանութեան մեծ տաճարը, պատգամաց սրբաւայրը, ուր կը հանդէս Մերոտաք, աստուածոց տէրը, եւ կանգնեցի իւր դմբեթը ծաղիլի մը պէս, եւ զայն զուսուակցի քործուած ոսկեով. որպէս զի նա փայլի արեւուն պէս. եւ ես ծածկեցի տաճարին գագաթը քարերով, պղնձով եւ կապարով:

Մերոտաքի մնացած էր իւր Պիլիթ կամ Միլիթթա (Mylitta) ամուսնոյն պաշտօնը. որ նաեւ Թասութ կամ Զարբանիթ կը կոչուի. զոր ըստ պաշտաման կը մատուցանէին անոր իբր ողջախոհ զիցուհի կամ իբր զիցուհի Սիրոյ:

Պիլիթ նաեւ չքեղ տաճար մը ունէր Բաբելոնի կեդրոնը, որուն բղջախոհ սովորութիւնները Հերոդոտոս մեղի կը նկարագրէ:

Միջագետաց ուրիշ քաղաքներ իրենց սիպահական աստուածութիւնները ունէին: Սին, լուսնոյ աստուածը Ուրի մէջ զրեթէ գերագոյն պաշտաման մը առարկան էր. Սիբարայի եւ Լարսանի մէջ Սամսան էր, արեգական աստուածը: Էրէքի եւ Նիբուրի

մէջ Պիլիթ-Թաառեթն էր: Քութայի մէջ Նանա-Չարգէնդն էր, Սուքքոթ—Պենոթ անուան տակ:

Հանդերձեալ կենաց հաւատքը ընդհանուր էր Միջագետաց մէջ: Ասորեստանեայք զժողովրդ 7 շրջանակաց բաժանեալ կը նըկատէին: Սակայն զժողովրդ անոնց համար ոչ հեշտութեանց վայր մ'էր ոչ պատժոյ տեղ մը, անի պարզապէս մտեւոց երկիրն էր. անշարժութեան եւ հանդստեան երկիր:

Մենք այս նիւթիս վրայ ասորական գրականութեան մէջ հետաքրքրական յիշատակարան մը ունինք: Ասի Իսթարի 'ի զըժոխս իջնելու քերթուածն է, Թամմուզը փնտռելու համար, որն որ Սեմական Ատոնիսն է. նա շատ երկայն ըլլալուն, միայն յառաջաբանէն քանի մը բան կը քաղենք:

«Իսթար, Աինի գուտարը, ուղղեց իւր ողին դէպ 'ի յաւիտեանականութեան տունը. որ Իրքալլա աստուծոյն բնակարանն է. դէպ 'ի այն երկիրը ուր կը մտցուի, բայց ուրիշ չ'եղուի. դէպ 'ի այն ճամբան ուր կ'երթուի առանց դարձի, դէպ 'ի այն տունը ուր մանողին համար կուրութիւն կայ լուսոյ տեղ: Ասի անոնց տեղն է որ քաղցեալ են, եւ տիղմ կուտան: Լոյսը հոն չի տեսնուիր եւ մթութեան մէջ կը մնան: Իրենց զգեստը, թռչուններունին պէս, փետուրէ հագուտ մ'է»:

Այս մանրամասնութիւններէն կը տեսնուի որ Ասորեստանեան ժողովուրդը էականապէս կրօնասէր ժողովուրդ մ'էր, նա ունէր իւր Շարաթը, (հանդստեան օրը) ինչպէս հրէից ժողովուրդը: Ասիէ դատ կրօնքը կը նախադասէր կենաց բոլոր մեծ գործքերուն: Ամեն գործք ամեն ճակատամարտք, ամեն աշխարհակալութիւնք Աստուրի փառաց համար էին:

Թագաւորական պալատներուն մուտքը աստուածոց պատկերներով պահուած պահպանուած էր, պարսպաց դռները աստուածութեանց անուաններ կը կրէին: Քանի մը աշխատութիւններ, օրինակի աղաքաւ աղիւմներու կաղապարումը, չէին կրնար կատարուիլ եթէ ոչ մասնաւոր աստուածութեան մը նուիրեալ տարւոյն մէկ քանի ամսոց մէջ: Հիմանց մէջ հմայական պահպանակներ կը դնէին:

Ասի սեմական ժողովրդոց հասարակ մէկ յատկանիշն է: Արգարու կը տեսնենք թէ Իսրայէլի մէջ կրօնքը կը բունէ առաջին տեղը: Աստուածաշունչը լիցուն է, ոչ հազարումէկ աստուածութիւններով ինչպէս 'ի Նինուէ, բայց Նիովայի անուամբը եւ զօրութեամբը:

Եւ հոս է Երբայական կրօնից գերազանցութիւնը, մինք հոս գործ չունինք, ինչպէս ասորեստանեան կրօնից մէջ, իսկ մը աստուածոց հետ, որ կը վիճեն եւ նոյն իսկ իրարու հետ կը ծեծկուին:

Վերը յիշուած ջրհեղեղին վերաբերեալ սեպագիր արձանագրութեան մէջ, ասորեստանցի դպիրը իւր աստուածոց ողբալի վեր մը կը խաղցնէ:


Հոն կըսուի թէ, «աստուածները, իսուփ մը չներու պէս սրբտաթափ էին». եւ աւելի առաջ երթալով կըսէ, «աստուածներ իրենց դաներուն վրայ նստած էին ողբալով, իրենց չրթունքը գոցուած էր, եկած աղետից պատճառաւ»:

Ծաղրալից չե՞ն մի այս աստուածութիւնները, որ ամենակարողի պէս օգնութեան կը կանչուին եւ որ կուլան կը հեծեն պարզ մահկանացուաց պէս: Եւ ի՞նչ տարբերութիւն Սասուածաշնչին Ենովային հետ, հոս պարզ միաստուածութիւնն է. «Սս եւ որ էն» եւ ոչ ոք իրմէ ետքը իսէթ ըլլալու չի գար իւր գերագոյն իշխանութեանը:

Դարձեալ երկու կրօնից ծիսից մէջ, երբայականք ունին առաւելութիւնը: Երուսաղէմի տաճարին մէջ Սասուծոյ կը նուիրէին երկրիս պտուղները կամ կենդանիներ:

Նինուէի մէջ ամենէն զժպհի զոհեր են, նոյն իսկ տղայք են որ զոհ կը մատուցուին այս արիւնարբու աստուածոց, քարէ կամ կաւէ շինուած, «որք ահանջներ ունին եւ չեն լսեր, եւ աչքեր ունին ու չեն տեսներ» ինչպէս կըսէ մարգարէն:

Իսրայէլի կրօնքը ուրեմն շատ փառաւոր գերազուստութիւն մը ունի ուրիշ Սեմական ժողովրդոց կրօնից վրայ:



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Շարայարութիւն (*)

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Կողմնակի բարձունս սրնգաց

1. Ձեռքերդ ազդրներուդ վրայ զիր. աջ սրունքդ լաւ ձգտելով կողմնակի վերցուր յաջկոյս եւ յետոյ առջի զիրքը բռնէ. 2. միեւնոյն շարժումը ձախ սրունքով ալ կատարէ :

Փոխոխակի շարունակէ :

Կրկնէ 6, 8, 10 անգամ իւրաքանչիւր սրունքով :

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Շրջումս սրնգաց

1. Նախորդ օրինակին պէս աջ սրունքդ վեր առ , կարելի եղածին չափ մեծ շրջանակ մը յօրինէ եւ դարձեալ առաջին զիրքը բռնէ . միեւնոյն շարժումը ձախ սրունքով ալ կատարէ :

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ


Ձգտում սրնգաց

1. Աջ սրունքդ հորիզոնաբար յառաջկոյս վեր առ. 2. ետ քաշէ. 3. միեւնոյն շարժումները ձախ սրունքով ալ կատարէ :
Կրկնէ 8, 12, 16 անգամ :

Շարայարեկի

ՅՈՎԸ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տարէ, էջ 144



ՊԱՏԿԵՐ տասն եւ հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
կ. Պոլսոյ համար 40 դանեկան
Գանառաց եւ օտար երկիրներու համար
բոլորտարի ծախսն ի միասին հաշուելով 50 « «

Իշխանացիք թիւ 2 դանեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եեշիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ թերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N^o 1

معارف نظارت جايله سنك رخصتيله طبع اولمشدر